

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՔՆԵՐՈՒՄ 2011 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. Հողաշինության և հողօգտագործման բնագավառում.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ ՀՕ-ի 42-րդ «Մարզպետի իրավասությունը հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում» հոդվածը 2011թ. երկրորդ եռամսյակում ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման / մարզային հողային պետական տեսչություն/ բաժնի առաջատար մասնագետ Սպարտակ Ղուշյանի կողմից վարչական հսկողություն է իրականացվել Ոսկևան, Աչաջուր, Սևքար, Վ.Կ.Աղբյուր և Արծվաբերդ համայնքներում:

Վերը նշված համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության են տրամադրվել ներքին պայմանագրերով / մեկ տարի ժամկետով, առանց նոտարական վավերացման և պետական գրանցման/, խախտելով ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 7-րդ հոդվածի պահանջները: Այդ թերությունները վերացնելու համար տրվել են համապատասխան ժամկետներ, աշխատանքները ընթացքի մեջ են, և այն կավարտվի մինչև 2012թ. գարնանային աշխատանքների ավարտը:

### 2. ՏԻ և ՀԳՄ հարցերի բնագավառում

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 14.02.2011թ. N 20 հրամանով 2011թ. երկրորդ եռամսյակում Տավուշի մարզի Ոսկևան, Սևքար, Աչաջուր, Վերին Կարմիրաղբյուր և Արծվաբերդ համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն՝ բացառապես համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով, արդյունքներով կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնցում տեղ են գտել բացահայտված թերություններն ու բացթողումները: Համայնքների ղեկավարների աշխատակազմերին առաջարկվել է 15-օրյա ժամկետում վերացնել դրանք:

Արդյունքում վերը նշված համայնքների աշխատակազմերին տրվել է խորհրդատվական, մեթոդական և գործնական բնույթի օգնություն, առանձին հարցերի վերաբերյալ նաև օրենսդրական պարզաբանումներ:

Ոսկեվան, Սևքար, Աչաջուր և Արծվաբերդ համայնքներում աշխատակազմերի կողմից լուրջ աշխատանք է իրականացվել, որի արդյունքում վեր հանված թերությունները, չնչին բացառություններով, վերացվել են:

Առավել շատ թերություններ բացահայտվել էին Վերին Կարմիրաղբյուր համայնքի ղեկավարի աշխատակազմում, որն ունի իր բացատրությունը. այստեղ երկար ժամանակ թափուր է քարտուղարի պաշտոնը: Պարտականությունները կատարում է ժամանակավոր պաշտոնակատարը: Հիմնականում դա է պատճառը, որ բացահայտված թերությունները մեծիմասամբ նկատելի էին գործավարության, ներքին փաստաթղթաշրջանառության և իրավական ակտերի որակի մասով:

Հանձնախմբի կողմից տրված 15-օրյա ժամկետում կատարվել է լուրջ աշխատանք, և թերությունների մեծ մասը վերացվել կամ շտկվել են: Մասնավորապես, կարգի է բերվել գրանցամատյաններում տարվող գրագրությունը: Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունվող իրավական ակտերը հիմնականում համապատասխանում են <<իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներին: Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրքը բացված է: Որոշ թերությունների վերացման գործընթացը դեռևս շարունակվում է և կավարտվի առաջիկայում:

### *3. Քաղաքաշինության բնագավառում.*

Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 19.17.2011թ. թիվ 01/15/4652-11 հանձնարարականի 2011 թվականի 2-րդ եռամսյակում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունները մեր կողմից տրված ցուցումներից հետո համայնքի ղեկավարները վերացրել են:

### *4. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում.*

Ոսկեվան, Աչաջուր, Սևքար, Արծվաբերդ, Վ.Կ.Աղբյուր համայնքների հողային ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման, հողօգտագործման հետ կապված խախտումների բարելավման, հողի բերրի շերտի կայուն կառավարման հիմնախնդիրների բարելավման նպատակով հանձնարարականներ են տրվել համայնքապետերին, հողօգտագործողներին, ընդերքօգտագործողներին:

Վերոհիշյալ համայնքներում տրվել են ցուցումներ, բնապահպանական այլ խախտումների բարելավման նպատակով տրվել է խորհրդատվական և այլ կարգի աջակցություն: